

ԱՐՓԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀՀ վարչապետի աշխատակազմի Միջազգային
իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի
Վճիռների և որոշումների կատարման վարչության պետ,
ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտ

ՄԻԵԴ ՎՃԻՌՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՄԵԿՆԱԲԱՆՍԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի դրույթներն ընկալվում և կիրառվում են այնպես, ինչպես մեկնաբանված են Եվրոպական դատարանի վճիռներում: Եվրոպական դատարանը տարիների ընթացքում աստիճանաբար ձևավորել և արդյունավետ կերպով կիրառում է ՄԻԵԴ վճիռների մեկնաբանման իր ուրույն մեթոդները:

Այս հոդվածի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունը միտված է Եվրոպական դատարանի վճիռներում Եվրոպական կոնվենցիայի մեկնաբանման մեթոդաբանության առանձնահատկությունների համընդգրկում ուսումնասիրությանը:

Հիմնաբառեր- ՄԻԵԴ վճիռներ, «travaux preparatoires», մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի մեկնաբանում, «ասպրող փաստաթուղթ»:

Եվրոպական կոնվենցիայի 32-րդ հոդվածի համաձայն՝ Եվրոպական դատարանի իրավագործությունը տարածվում է այն բոլոր հարցերի վրա, որոնք վերաբերում են Կոնվենցիայի և նրան կից Արձանագրությունների դրույթների մեկնաբանմանն ու կիրառմանը (...): Փաստացի, Եվրոպական դատարանը հանդես է գալիս որպես Եվրոպական կոնվենցիայի դրույթների մեկնաբանման բացառիկ գործառնություն (իրավասության) օժտված մարմին: Եվրոպական դատարանի վճիռներում մասնավորեցվում, լրացուցիչ պարզաբանվում և հստակեցվում է Եվրոպական կոնվենցիայով երաշխավորվող մարդու իրավունքների և հիմնական ազատությունների բովանդակությունը: Վեր հանելու համար Եվրոպական դատարանի վճիռներում Եվրոպական կոնվենցիայի մեկնաբանման մեթոդաբանությունը անհրաժեշտ է նախ քննարկել տեսաբանների մոտեցումները իրավական ակտերի մեկնաբանման առնչությամբ:

Հիմք ընդունելով իրավական ակտերի մեկնաբանման վերաբերյալ տեսաբանների խիստ տարբերվող մոտեցումները՝ ձևավորվել են երկու հիմնական տեսություններ: Առաջին տեսության կողմնակիցները հակված են ընդունելու, որ իրավական ակտերի դրույթների մեկնաբանումը պետք է հիմնվի իրավական ակտի տեքստի և դրանում պարունակվող ձևակերպումների վրա (textualism), մյուս տեսության կողմնակիցների պնդմամբ իրավական ակտի դրույթների մեկնաբանման հիմքում պետք է ընկած լինի խնդրո առարկա իրավական կարգավորումը նախատեսելու նպատակի վերհանումը

(intentionalism) [1, էջեր 11-13]: Իրավական ակտի տեքստի հիման վրա մեկնաբանման տեսության կողմնակիցները պնդում են, որ իրավակիրառողները՝ մասնավորապես դատարանները պետք է ընկալեն և կիրառեն իրավական ակտի դրույթներն այնպես, ինչպես շարադրված է, առանց լրացուցիչ ենթատեքստ փնտրելու: Այս տեսության կողմնակիցները պնդում են, որ միայն իրավական ակտի տեքստի հիման վրա իրավական ակտի մեկնաբանության ճանապարհով են դատավորները գործնականում երաշխավորում իրավական որոշակիությունը [2, էջ 76]:

Ինչպես Ֆրանկ Իսթերբորդն է նշել իր «Իրավական ակտերի մեկնաբանման գործնական նշանակությունը» աշխատության մեջ՝ «...իրավական ակտի դրույթները դատավորների անհատական իրավական մտքի զարգացման համար չեն նախատեսված, դրանք հանրային-իրավական բնույթի հարաբերությունների նկատմամբ կիրառվող դրույթներ են: Իրավական ակտի տեքստն է, որ արտահայտում է այս կամ այն հարցի վերաբերյալ իրավական հանրույթի պատկերացումը և եթե դատավորներն իրավական ակտի տեքստի նկատմամբ նախապատվություն տան իրավական կարգավորման ընդհանուր, չգրված և չարտահայտված նպատակին, չի բացառվում, որ գործնականում փորձեն առաջ մղել իրենց սեփական պատկերացումները, ընկալումները և այսպիսով անէացնեն իրավական ակտի դրույթների իրական բովանդակությունը» [3, էջեր 79-81]: Իրավական ակտի տեքստի հիման վրա մեկնաբանման տեսության

քննադատները գտնում են, որ այն չի բխում օրինականության և արդարության սկզբունքներից, քանի որ առավելապես կարևորում է իրավական ակտի ձևը, քան բովանդակությունը [4, էջ 14]:

Իրավական կարգավորման հետապնդած նպատակի հիման վրա իրավական ակտի մեկնաբանման տեսության կողմնակիցները պնդում են, որ «օրենսդրությունը հստակ նպատակաուղղված փաստաթուղթ է, և դատավորները պետք է օրենքներն այնպես կիրառեն, որպեսզի լավագույնս բացահայտվի օրենսդրի հետապնդած նպատակը» [5]: Այս տեսության կողմնակիցները հատուկ ուշադրություն են դարձնում օրենսդրական գործընթացին, որով ընդունվել է կոնկրետ իրավական ակտը՝ փորձելով վեր հանել այն իրավական խնդիրը, որի հաղթահարմանը միտված է եղել իրավական ակտի այս կամ այն դրույթի ընդունումը: Որոշելու համար օրենսդրի նպատակը՝ այս տեսության կողմնակիցները հաճախ գնում են իրավական ակտի ընդունման անհրաժեշտության ուսումնասիրության և իրավական կարգավորման հիմքում նկատելի ենթատեքստի բացահայտման ճանապարհով:

Թեև յուրաքանչյուր դեպքում դատարանի մեկնաբանման առարկան կիրառման ենթակա իրավական ակտի կոնկրետ դրույթն է, այնուամենայնիվ իրավաստեղծ գործունեության նպատակը վեր հանելու ճանապարհին դատարանը չի կարող սահմանափակվել միայն մեկ դրույթի բովանդակության մեկնաբանմամբ: Հետևաբար, այս տեսության կողմնակիցներն առանձնահատուկ կերպով կարևորում են դատարանի կողմից իրավական կարգավորման հիմքում ընկած նպատակը բացահայտելու համար ամբողջ իրավական ակտի և ոչ միայն կոնկրետ դրույթի գաղափարախոսությամբ առաջնորդվելու հանգամանքը [6, էջ 97]:

Քննարկվող տեսության քննադատները նշում են, որ անհնար է յուրաքանչյուր առանձին դեպքում ապահովել դատարանների կողմից իրավական ակտերի համակարգային վերլուծության իրականացումը պայմանավորված այն հանգամանքով, որ դատական համակարգի կոչումը որևէ իրավիճակում իրավական ակտերի գործնական կիրառության ապահովումն է, խնդրո առարկա հարաբերությունների կարգավորման նպատակով անհրաժեշտ իրավական դրույթների պատշաճ կիրառումը և ոչ իրավական ակտի ընդունման նախապատմության բացահայտումը: Հատկանշական է, որ ֆրանսիացի փիլիսոփա և իրավագետ Շառլ Լուի Մոնտեսքյուն ևս կարծում էր, որ օրենքները գործում են դատարանների միջոցով, երբ դատարանը կիրա-

ռում ու մեկնաբանում է օրենքը («courts should act as the mouth of the law») և իրենց ամենօրյա աշխատանքը պետք է ուղղված լինի իրավական նորմերով նախատեսվող կարգավորման հետապնդած նպատակի պարզաբանմանը:

Եվրոպական դատարանը, լինելով Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխավորը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում, իր վճիռներում Եվրոպական կոնվենցիայի դրույթները մեկնաբանելիս հաջողությամբ զուգակցում է վերը նշված մեթոդները: Ավելին, Եվրոպական դատարանի պրակտիկայի ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ Եվրոպական դատարանը, վերը նշված մեթոդներին զուգահեռ, սահմանել և կիրառում է Եվրոպական կոնվենցիայի մեկնաբանման իր ինքնուրույն մեթոդները, որոնց կանոնադաշտնանք ստորև:

Պայմանավորված հասարակական հարաբերությունների, տեխնիկայի ու գիտության զարգացմամբ՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների բովանդակային ընկալումը մշտապես փոփոխվում և ընդլայնվում է, ինչն էլ պայմանավորում է, ի թիվս այլնի, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի դրույթների էվոլյուցիոն մեկնաբանման անհրաժեշտությունը: Հատկապես համացանցի առաջացումից հետո Կոնվենցիոն մի շարք դրույթների բովանդակային ծավալը փոփոխվեց՝ ի հայտ բերելով Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորվող անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի [7] կամ 10-րդ հոդվածով երաշխավորվող արտահայտվելու ազատության պաշտպանության ներքո ընկալվող նոր իրավունքներ [8]: Վերը նշվածով պայմանավորված՝ Եվրոպական դատարանն իր քննությանը հանձնված գործերով մշտապես հաշվի է առնում կոնկրետ կիրառման ենթակա կոնվենցիոն դրույթի իմացաբանական ծավալի նոր զարգացումները: Եվրոպական դատարանը մշտապես փորձում է տալ Եվրոպական կոնվենցիայի դիմամիկ կամ էվոլյուցիոն մեկնաբանությունը՝ համարելով վերջինս «ապրող փաստաթուղթ»: «Ապրող փաստաթղթի» դոկտրինը Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ամենահայտնի սկզբունքներից մեկն է: Համաձայն վերջինիս՝ Եվրոպական կոնվենցիան պետք է մեկնաբանվի «ներկայիս պայմանների լույսի ներքո», և որ կոնվենցիոն համակարգը զարգանում է Դատարանի մեկնաբանության միջոցով [9]:

Ferrazzini v. Italy գործով Մեծ պալատի վճռում Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Կոն-

վենցիայի ընդունումից հետո անհատի և պետության միջև հարաբերությունները ակնհայտորեն զարգացել են բազմաթիվ ոլորտներում, ինչի արդյունքում պետական կարգավորումն ավելի ու ավելի է միջամտում մասնավոր-իրավական հարաբերություններին: Սրա արդյունքում մի շարք հանրային-իրավական բնույթի հարաբերություններ¹ ներառվում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պաշտպանության ներքո, եթե գործի ելքը որոշիչ է անձանց մասնավոր իրավունքների և պարտականությունների համար:

«Բայաթյանն ընդդեմ Հայաստանի» գործով Մեծ պալատի վճռով Եվրոպական դատարանն ավելի խորացրեց Կոնվենցիայի վերաբերյալ «ապրող փաստաթուղթ» դոկտրինը՝ նշելով, որ Կոնվենցիան ապրող փաստաթուղթ է, որը պետք է մեկնաբանվի ներկայիս պայմանների և այսօր ժողովրդավարական պետություններում տիրող գաղափարների լույսի ներքո [10]:

Թեև Կոնվենցիոն դրույթների էվոլյուցիոն մեկնաբանումը դիտարկվում է որպես Կոնվենցիոն համակարգի զարգացման անհրաժեշտ նախապայման, այնուամենայնիվ Դատարանը յուրաքանչյուր դեպքում դրույթի մեկնաբանությունը տալիս է միասնական եվրոպական համաձայնության լույսի ներքո: Այլ կերպ ասած՝ Դատարանը, որպես կանոն, տալիս է կոնվենցիոն դրույթի նոր՝ առավել ընդարձակ բովանդակային մեկնաբանություն այն դեպքերում, երբ ինքն իր համար արձանագրում է խնդրո առարկա հարցի կապակցությամբ բավականաչափ հստակ կերպով արտահայտված միասնական եվրոպական համաձայնության առկայությունը [11]: Վերջինիս առկայությունը դատարանը պարզում է իրավահամեմատական ուսումնասիրությունների [12], միջազգային համաձայնագրերի [13], միջազգային կազմակերպությունների ու կառույցների գեկույցների ուսումնասիրման [14] և այլ գործիքների օգնությամբ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային որոշումներում աստիճանաբար զարգացրել է այն գաղափարը, որ Եվրոպական կոնվենցիայի գլխավոր նպատակը ոչ թե մարդու հիպոթետիկ իրավունքների ու ազատությունների երաշխավորումն է, այլ դրանց հաղորդվող բովանդակությունը, ինչը պետք է ապահովի, որ կոնվենցիոն իրավունքները լինեն գործնականում կիրառելի: Այս մոտեցումը Եվրոպական դատարանի կողմից պահպանվում է նաև կոնվենցիոն դրույթները մեկնաբանելիս: Օրինակ՝ Soering v. United Kingdom գործով Եվրոպական դատարանն արձանագրել է որ Կոնվենցիայի՝ որպես անհատ-

ների իրավունքների պաշտպանության իրավական գործիքի դրույթները պետք է մեկնաբանվեն և կիրառվեն այնպես, որ դրա երաշխիքները գործնականում կիրառելի և արդյունավետ լինեն:

Կախված իր առջև բարձրացված հարցի բնույթից, կիրառելի հոդվածի բովանդակությունից և կոնկրետ գործով էական նշանակություն ունեցող այլ հանգամանքներից՝ երբեմն Դատարանը Կոնվենցիայի դրույթները մեկնաբանում և դրանցով նախատեսված կարգավորումների նպատակը վեր է հանում հիմք ընդունելով Կոնվենցիայի նախագծման նախապատրաստական փուլի փաստաթղթերում արված դիտարկումները travaux preparatoires: Այսպես, օրինակ «Բայաթյանն ընդդեմ Հայաստանի» գործով Եվրոպական դատարանի Մեծ պալատի վճռում Դատարանը նշում է, որ մինչև սույն գործն այն երբևէ չի քննել կրոնական հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի նկատմամբ 9-րդ հոդվածի կիրառելիության հարցը, ի տարբերություն Հանձնաժողովի, որը մերժել էր կիրառել այդ հոդվածը նման գործերով: Հանձնաժողովն այդպիսով Կոնվենցիայի 9-րդ հոդվածը դիտարկել էր 4-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետի հետ օրգանական կապի մեջ² գտնելով, որ դրանով կրոնական հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի ճանաչման որոշումը թողնվել է Պայմանավորվող կողմերի հայեցողությանը: Հետևաբար, կրոնական հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվող անձինք դուրս էին 9-րդ հոդվածի պաշտպանության սահմաններից, որը չի կարող մեկնաբանվել որպես բանակում ծառայելուց հրաժարվելու դեպքում քրեական հետապնդումից խուսափելու երաշխիք տրամադրող նորմ:

«Բայաթյանն ընդդեմ Հայաստանի» գործով Մեծ պալատի վճիռը շրջադարձ մտցրեց դատարանի նախադեպային իրավունքում՝ զարգացնելով Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումը նախկինից էականորեն տարբերվող ուղղությամբ: Մեկնաբանելով 4-րդ հոդվածը՝ Եվրոպական դատարանը նշել է, որ 4-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետը 4-րդ հոդվածի 2-րդ կետով արգելված «հարկադիր և պարտադիր աշխատանք» հասկացության շրջանակներից բացառում է զինվորական բնույթի ցանկացած ծառայություն, իսկ այն երկրներում, որտեղ օրինական է ճանաչվում զինվորական ծառայությունից հրաժարվելը՝ համոզմունքներից ելնելով՝ պարտադիր զինվորական ծառայության փոխարեն նշանակված ծառայությունը»: Դատարանը, այնուհետև, այս կապակցությամբ նշել է 4-րդ հոդվածի վերաբերյալ Travaux

preparatoires-ը, որի 23-րդ պարբերությամբ սահմանվում է «բ» ենթակետում, կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունք ունեցող անձանց վերաբերյալ դրույթը նպատակ ունի մատնանշելու, որ օրենքով նրանցից պահանջվող ցանկացած ծառայություն չի ընդգրկվում պարտադիր կամ հարկադիր աշխատանք հասկացության մեջ: Դատարանի կարծիքով Travaux preparatoires-ով հաստատվում է, որ 4-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետի միակ նպատակն է տալ «պարտադիր կամ հարկադիր աշխատանք» հասկացության լրացուցիչ պարզաբանումը: Այն ինքնին չի ճանաչում և ոչ էլ բացառում է կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը, և հետևաբար այն չպետք է ունենա 9-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները սահմանափակող ազդեցություն:

Մեկ այլ՝ Hirsi Jamaa and others v. Italy գործով Եվրոպական դատարանի առջև բարձրացվել էր Կոնվենցիային կից 4-րդ Արձանագրության 4-րդ հոդվածի արտատարածքային կիրառության հարցը: Գանգատը մասնավորապես վերաբերում էր բաց ծովում բռնված ներգաղթյալներին իրենց մեկնման երկիր վերադարձնելուն: Եվրոպական դատարանի առջև բարձրացված հարցն էր գնահատել, թե արդյոք Կոնվենցիային կից 4-րդ Արձանագրության 4-րդ հոդվածը կիրառելի է օտարերկրացիներին երրորդ երկիր վտարելու՝ պետության տարածքից դուրս իրականացված գործողության վերաբերյալ գործով:

Բարձրացված իրավական հարցին առավել համապարփակ պատասխան տալու համար Եվրոպական դատարանն ուսումնասիրել է ինչպես կիրառելի իրավունքը, այնպես էլ Կոնվենցիայի նախապատրաստական նյութերը (travaux preparatoires)՝ փորձելով բացահայտել քննարկվող դրույթի շրջանակներում «վտարում» հասկացության ինչպես բառացի, այնպես էլ նպատակային նշանակությունը: Արդյունքում՝ Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ չկա որևէ հանգամանք, որը կխոչընդոտի այդ հոդվածի արտատարածքային կիրառությանը: Բացի այդ, խնդրո առարկա դրույթի կիրառումը սահմանափակելով մասնակից պետությունների տարածքներից օտարերկրացիների կոլեկտիվ վտարման դեպքերով, կնշանակեր, որ ժամանակակից ներգաղթի մոդելների նշանակալից տարրերը չէին վերաբերի այդ դրույթի գործողության ոլորտին և կգրկեին հաճախ իրենց կյանքը վտանգելով ծովում գտնվող և պետության սահմաններին հասնելու հնարավորություն չունեցող

ներգաղթյալներին վտարումից առաջ իրենց անձնական գործի հանգամանքների ուսումնասիրությանը, ի տարբերություն ցամաքում գտնվող անձանց: «Վտարում» հասկացությունը հիմնականում տարածքային է իր բնույթով, ինչպես և «իրավագործությունը»: Սակայն անդամ պետությունները բացառիկ դեպքերում կարող են իրականացնել արտատարածքային իրավագործությունը, որը տվյալ դեպքում դրսևորվել է կոլեկտիվ վտարման ձևով: Ավելին, ծովային միջավայրի հատուկ բնույթը չի կարող հանգեցնել իրավական պաշտպանությունից դուրս գտնվող տարածքի առաջացման, ուր անձանց նկատմամբ չի կիրառվում որևէ իրավական համակարգ, որն ունակ է ապահովել Կոնվենցիայով նախատեսված իրավունքները և երաշխիքները:

Կոնվենցիան բովանդակում է մի շարք եզրույթներ և արտահայտություններ, ինչպես օրինակ՝ «դատարան», «վկա», «գույք», «ամուսնություն», «վնաս», որոնց իմաստն ու բովանդակությունը տարբեր իրավական համակարգերում կարող է տարբեր լինել: Օրինակ սեփականություն եզրույթի քաղաքացիաիրավական բովանդակությունը տարբերվում է Գանիայում և Հունաստանում, ուստի մի դեպքում անձը կոնկրետ իրավիճակում կարող է ունենալ օրենքով պաշտպանվող իրավունքներ, մյուս դեպքում՝ ոչ [15]: Կոչված լինելով ապահովել անձի հիմնական իրավունքների ու ազատությունների արդյունավետ պաշտպանությունը՝ Եվրոպական դատարանը սահմանել է մի շարք հասկացությունների ինքնավար նշանակությունը և առաջնորդվում է դրանցով: Այս ճանապարհով Եվրոպական դատարանը ԵԽ անդամ բոլոր պետություններում երաշխավորում է իրավունքների պաշտպանության հավասար մակարդակ:

Այսպիսով, Եվրոպական դատարանը Եվրոպական կոնվենցիայի դրույթները մեկնաբանելիս ելնում է օգտագործվող բառերի և արտահայտությունների առաջնային նշանակությունից՝ դրանք դիտարկելով խնդրո առարկա կարգավորումը նախատեսելիս հետապնդած նպատակի լույսի ներքո [16]: Այսկերպ Եվրոպական դատարանն ապահովում է Եվրոպական կոնվենցիայի դրույթների մեկնաբանությունների արդյունավետությունը և գործնականում կիրառելիությունը:

¹ Ինչպես օրինակ՝ մասնավոր կլինիկայի շահագործումը, մասնագիտական գործունեության պայմանների հետ կապված թույլտվության տրամադրումը կամ ակոնիոլային խմիչքներ վաճառելու լիցենզիան:

² Հոդված 4 Ստրկության և հարկադիր աշխատանքի արգելում (... Սույն հոդվածի նպատակների համար «պարտադիր կամ հարկադիր աշխատանք» հասկացությունը չի ներառում բ. զինվորական բնույթի ցանկացած ծառայություն, իսկ այն երկրներում, որտեղ օրինական է ճանաչվում զինվորական ծառայությունից հրաժարվելը՝ համոզմունքներից ելնելով՝ պարտադիր զինվորական ծառայության փոխարեն նշանակված ծառայությունը):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը *Khelili v. Switzerland* գործով:
2. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը *mouvement raelien suisse v. switzerland* գործով:
3. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի վճիռը *Matthews v. the United Kingdom* գործով:
4. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի վճիռը *Bayatyan v. Armenia* գործով:
5. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը *Christine Goodwin v. UK* գործով:
6. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը *Costa and Pavan v. Italy* գործով:
7. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը *Mamatkulov and Askarov v. Turkey* գործով:
8. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը *Opuz v. Turkey* գործով:
9. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը *Magyar Helsinki Bizottsng v. Hungary* գործով:
10. R. Bernhart «Thoughts on the interpretation of human rights treaties» R.St.J. Macdonald eds. *The european system for the protection of human rights*. 1993, pp.65-71, p. 67.
11. Guido Calabresi, *An Introduction to Legal Thought: Four Approaches to Law and to the Allocation of Body Parts*, 55 *STAN. L. REV.* 2113 (2003), pages 11-13.
12. John F. Manning, *Without the Pretense of Legislative Intent*, 130 *HARV. L. REV.* 2397, 2413, 2425 (2017), p. 76.
33. Easterbrook, *The Role of Original Intent in Statutory Construction*, 11 *HARV. J.L. & PUB. POL'Y* 59, p. 79-81.
14. Robert A. Katzmann, *Response to Judge Kavanaugh's Review of Judging Statutes*, 129 *HARV. L. REV. F.* 388 (2016) p. 14.
15. Robert A. Katzmann, *Judging statutes* 31 (2014). Academics sometimes distinguish between «purpose» and «intent», most frequently using «purpose» to mean the objective intent that is the goal of new purposivism, and «intent» to mean the legislature's actual intent, which was the goal of the old «intentionalism». See, e.g., Jonathan R. Siegel, *The Inexorable Radicalization of Textualism*, 158 *U. PA. L. REV.* 117, 123-24 (2009). However, courts generally use the two words interchangeably, and this report follows suit. See *MIKVA & LANE*, supra note 9, at 107; see, e.g., *Liparota v. United States*, 471 U.S. 419, 424-25 (1985) (referring both to «congressional intent» and «congressional purpose»).
16. Henry M. Hart, JR. & Albert M. Sacks, *The legal process: basic problems in the making and application of law* 1182 (William N. Eskridge, Jr. & Phillip P. Frickey eds., 1994), p. 97.

Արփիե Արակելյան

Начальник управления по исполнению постановлений и решений
офиса представителя по международно-правовым вопросам
аппарата премьер-министра РА.
Аспирант Академии государственного управления РА

РЕЗЮМЕ

Методология толкования европейской конвенции в рамках постановлений ЕСПЧ

Установки Европейской конвенции прав человека воспринимаются и используются так, как толкованы в постановлениях Европейского суда. В течение многих лет Европейский суд постепенно сформировал и эффективно применяет свои особые методы при толковании постановлений ЕСПЧ.

Исследование осуществимое в рамках этой статьи склонно к исследованию особенностей методологии толкования Европейской конвенции в решениях Европейского суда.

Ключевые слова: постановления ЕСПЧ, “travaux préparatoires”, толкование Европейской конвенции прав человека, “живущий документ”.

Arpine Arakelyan

Office of the Prime minister of RA
Office of the representative on international legal matters,
head of the department for execution of judgments and decisions
PhD student, Public Administration Academy

SUMMARY

The methodology of interpretation of the European Convention in the framework of the judgments of the ECtHR

The provisions of the European Convention on Human Rights are perceived and applied as interpreted in the judgments of the European Court. Over the years, the European Court of Human Rights has gradually developed and effectively applies its special methods of interpretation in the judgments of the ECtHR.

The study carried out within the framework of this article tends to reveal the peculiarities of the methodology of interpretation of the European Convention in the judgments of the European Court.

Key words: ECtHR judgments, travaux préparatoires, interpretation of the European Convention on Human Rights, “living instrument”.

Բնագիրը ներկայացվել է 12.04.2022թ.

Ընդունվել է տպագրության 27.04.2022թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է)

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Խաչատրյանը